

Հասարակայնության հետ կապերի բաժն

Լիլիթ Մարկոսյան, ՀԱՅՓ հայկական լուրեր

Lilit.markosian@gmail.com | +374(0)99.470.608

Շառլոթ Պուլենին, զարգացման և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար

ckpoulain@gmail.com | +374(0)77.003.048



Մամլո հաղորդագրություն. ղեկտեմբեր 8, 2014

ՀԱՅՓ շրջիկ պատկերասրահի մեկնարկ՝ ցուցահանդեսի բացում և միջոցառումների շարք
Ցուցահանդեսի խորագիրն է <<Մտքի շրջանակ՝ համատեքստ և հեռանկար>> ղեկտեմբեր 12-ից 22-ը, 2014թ. :

Հասցե՝ <<Էլիտ պլազա>> բիզնես կենտրոն, 4^{րդ} հարկ, Խորենացի 15, Երևան:

Աշխատանքային ժամեր՝ երկուշաբթի - ուրբաթ ժ.12:00 - 14:00/ 15:00 - 21:00 , շաբաթ և կիրակի օրերին ժ. 15:00 - 21:00-ը

Բացման արարողությունը տեղի կունենա ղեկտեմբեր 12-ին, ուրբաթ, ժ. 14:00 - 21:30:

Միջոցառումների շաբաթվա ծրագիրն է՝

ղեկտեմբերի 16, երեքշաբթի՝ *քննարկում <<համայնքի ձևավորում>>* (անգլերեն)

ղեկտեմբերի 19, ուրբաթ՝ *քննարկում <<Երևանի արվեստի տեսարանը>>* (հայերեն)

ղեկտեմբերի 20, շաբաթ՝ *համերգ, փակման արարողություն*

Ուրախ ենք ձեզ տեղեկացնել ՀԱՅՓ շրջիկ պատկերասրահի՝ Հայաստանի առաջին շրջիկ շարժման, բացման մասին: Մեր նպատկան է աջակցել տեղացի ժամանակակից արվեստագետներին՝ նրանց ընձեռնելով ներկայանալու նոր հնարավորություններ: Մեր միջոցառումների շաբաթվա ընթացքում կանդադարառնանք Հայաստանում ժամանակակից արվեստի և նորարարությունների հիմնախնդիրներին: Խոսակների շարքում են երաժիշտներ, կինոռեժիսորներ, նկարիչներ, սկսնակ և փորձառու արվեստագետներ:

Ի՞նչ է շրջիկ պատկերասրահը

Շրջիկ պատկերասրահը տեղից տեղ շարժվող պատկերասրահ է, որը կազմակերպում է ժամանակավոր ցուցահանդեսներ (ամեն անգամ տասն օրով) անսպասելի վայրերում, ինչպիսիք են՝ խանութների ցուցափեղկերը, վարձակալվող կառույցները կամ լքված գործարանները: ՀԱՅՓ շրջիկ պատկերասրահը միտում ունի հասարակությանը ներկայացնել այս տարածքների գործածության հնարավորությունները և արվեստի կարևորությունը, որը ստիպում է մեզ տեսնել շրջակա միջավայրը և կերտել ավելի լավ ապագայի հեռանկարներ:

Ովքեր են ՀԱՅՓ-ը

ՀԱՅՓ-ը ակտիվ միջազգային երիտասարդների նախաձեռնող խումբ է, որը որակյալ ցուցահանդեսներ կազմակերպելու նպատակով համագործակցում է տեղացի նկարիչների և ստեղծագործ արվեստանոցների հետ:

<<Մենք ցանկանում ենք առաջարկել նկարիչներին իրենց աշխատանքները ներկայացնելու անսովոր և դինամիկ այլընտրանք: Շրջիկ պատկերասրահները հետաքրքիր համաշխարհային միտում ունեն և ժամանակն է, որ այն բերենք Հայաստան>>:

Աննա Գարգարյան՝ հիմնադիր տնօրեն, *գեղարվեստական ղեկավար*

<<Արվեստագետներին և հանրությանը հրավիրում ենք քաղաքը մեզ հետ բացահատելու, քանի որ մենք շրջում ենք տարբեր թաղամասերի տարբեր անկյուններում: Քաղաքը մեր պատկերասրահ է:>>

Շառլոթ Պուլենին՝ *զարգացման և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար*

<<ՀԱՅՓ-ը ՁԼՄ-ների, բլոգերի կամ մեր պատկերասրահի տարածքում հանդես է գալիս որպես ներառող հարթակ: Մեր միջոցառումները և քննարկումները մեկտեղում են տարբեր աշխարհընկալում ունեցող մարդկանց երկխոսություն սկսելու և մտքերի փոխանակման համար>>:

Օսկար Ալվարադո՝ *Ռազմավարության ղեկավար*

Հասարակայնության հետ կապերի բաժնի
Լիլիթ Մարկոսյան, ՀԱՅՓ հայկական լուրեր
Lilit.markosian@gmail.com | +374(0)99.470.608
Շառլոթ Պուլեն, զարգացման և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար
ckpoulain@gmail.com | +374(0)77.003.048



Ցուցահանդես

Դեկտեմբերի 12 - 22, 2014թ.

<<Մտքի շրջանակ՝ համատեքստ և հեռանկար>>

ՀԱՅՓ-ի շրջիկ պատկերասրահի առաջին ցուցահանդեսը կմեկնարկի 2014 թ.-ի դեկտեմբերի 12-ին, ժ. 18:00-ին << Էլիտ պլազա >> բիզնես կենտրոնի չորրորդ հարկում: Մեր հավաքական ցուցահանդեսը բացահայտում է, թե որքան տարբեր ազդեցություններ են ունենում սոցիալական և տարածական հայեցակարգերն աշխարհընկալման վրա: Այս ցուցահանդեսի նպատակն է նկարիչների ստեղծագործ մոտեցման միջոցով նպաստել երկխոսությանը, փոխըմբռնմանը և ազատ մտքին: Մասնակից արվեստագետները կուսումնասիրեն ֆիզիկական տարածության և հայեցակարգային վերացականության միջով տեսնելու ուղիները: Աշխատանքների մեջ ներառված են կտավներ, լուսանկարներ, տեսագրություն և այլն: Բացման երեկոն կուղեկցվի կենդանի երաժշտությամբ, մեր հովանավորի կողմից <<Գոլդեն Գրեյվ Արմաս>> զինով և ինտերակտիվ միջոցառմամբ: Մեր մյուս հովանավորն են՝ <<Էլիտ պլազա >> բիզնես կենտրոնը, <<Jarakite Creative Partners>>-ը, <<Cyber Vision Development Studio>>-ն և <<The SCreENERY>>-ն:

Արվեստագետներ՝ Շարիս Կարապետյան, Արամազդ Կալաջյան, Լիլիթ Մարկոսյան, Արարատ Մինասյան, Կարեն Միրզոյան, Բենո Միշոյան, Լիլիթ Ումեդյան, Սքոթ Ուիլս:

ՀԱՅՓ շրջիկ պատկերասրահը նկարիչների, արվեստասերների և բացահայտումներով հետաքրքրված անձանց լայն լսարանի համար է:

Հասարակայնության բաժին. հետադարձ կապ՝

Լիլիթ Մարկոսյան՝ ՀԱՅՓ հայկական լուրեր
Lilit.markosian@gmail.com | +374(0)99.470.608

Շառլոթ Պուլեն՝ զարգացման և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար
ckpoulain@gmail.com | +374(0)77.003.048

ՀԱՅՓ. հետադարձ կապ՝

Աննա Գարգարյան՝ հիմնադիր տնօրեն, գեղարվեստական ղեկավար
Info.hayp@gmail.com | www.haypopup.wordpress.com

Հեռ՝ +374(0)99.741.626

Facebook: www.facebook.com/haypopup

Twitter: www.twitter.com/haypopup